ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, 0213, Բյուրական համայնք, 1-ին փող., շ. 68:
Հեռ.(0232)94600; http:byurakan.com.am; e-mail:byurakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվարի 2016 թվականի N1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերության դրույթներով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի թիվ 1 նիստի օրակարգը՝ բաղկացած հետևյալ հարցերից.
   ա) Բյուրական համայնքի 2015 թվականի տարեկան բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման հաշվետվության մասին;
   բ) Բյուրական համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի, գյուղապետարանի աշխատակազմի և «Բյուրականի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակների ու պաշտոնային դրույքաչափերի մասին;
   գ) Բյուրական համայնքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների չափը սահմանելու մասին;
   դ) Բյուրական համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի մասին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

	կողմ-(8)	դեմ-(0)	ձեռնպահ-(0)
1. ԱՅՎԱԶՅԱՆ ԳՆԵԼ			
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ			
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐԵՆ			
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ			
5. ՀՄԱՅԱԿՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ			
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌԱԴԻԿ			
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ			

Համայնքի ղեկավար /Զ. Բաբայան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, 0213, Բյուրական համայնք, 1 ին փող., շ. 68:
Հեռ.(0232)94600; http:byurakan.com.am; e-mail:byurakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվարի 2016 թվականի N2

ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթներով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի ներկայացրած 2015 թվականի տարեկան բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

	կողմ (8)	դեմ (0)	ձեռնպահ (0)
1. ԱՅՎԱԶՅԱՆ ԳՆԵԼ			
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ			
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐԵՆ			
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ			
5. ՀՄԱՅԱԿՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ			
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌԱԴԻԿ			
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ			

/Համայնքի ղեկավար՝ /Զ. Բաբայան/

Հավելված
Բյուրական համայնքի ավագանու
« 21 » հունվարի 2016 թ. N2 որոշման

ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Բյուրականի համայնքի 2016 թվականի
տարեկան բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտները կազմում է՝

	տարեկան	4-եռ.	Փաստացի	կատ. %
Ընդամենը եկամուտներ	93101.4	93101.4	93102.9	100.0
որից՝սեփական եկամուտներ	19096.6	19096.6	18523.8	97.0
ա) գույքահարկ շենք և շինություններից	3159.6	3159.6	2511.6	79.5
բ) հողի հարկ	4501.1	4501.1	4715.6	104.8
գ) գույքահարկ փոխադրամիջոցներից	10999.9	10999.9	11168.6	101.5
դ) տեղական տուրքեր	436.0	436.0	128.0	
ա) պետ բյուջեից ֆն. համ. տր.դոտացիա	69558.7	69558.7	69558.7	
բբ) պետ բյուջեից համայնքի վարչ. բյուջե տրամադրվող դոտացիներ	154.6	154.6	154.6	
գույքի վարձակալությունից եկամուտներ	4086.5	4086.5	4213.5	
այլ եկամուտներ	205.0	205.0	572.3	
վարչական գանձումներ			80.0	
Ընդամենը վարչական բյուջեի եկամուտները	93101.4	93101.4	93102.9	
ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդ	30417.5			

Բյուջետային ծախսերը ըստ գործառնական դասակարգման. 2016 թվականի չորրորդ եռամսյակ

	վարչական բյուջե		ֆոնդային բյուջե	
	տարեկան	փաստ.	տարեկան	փաստ.
Ընդամենը ծախսեր	93101.4	67935.3	30417.5	3159.2
Ընդհանուր բնույթի համայնք. ծառայ.	55324.6	33196.0	27600.0	8769.0
Տնտեսական հարաբերություններ	-	-	2317.5	-5609.8
Շրջակա միջավայրի պաշտպանություն	1300.0	1272.8	-	-
Բնակարանային շին. և կոմ ծառայութ.	6384.0	3944.9	0.0	0.0
Առողջապահություն	3500.0	3021.6	-	
Կրթություն	20092.8	20000.0	500.0	
սոցիալական պաշտպանություն	6500.0	6500.0	-	-

Բյուջետային ծախսերը ըստ տնտեսական դասակարգման. 2016թվականի չորրորդ եռամսյակ

Ընթացիկ ծախսեր

	տարեկան	փաստացի
Այդ թվում՝		
Աշխատավարձեր և հավելավճարներ	40034.8	30686.6
Ծառայություններ և ապրանք. ձեռք բերում	41466.6	26954.0
Դրամաշնորհներ	3500.0	3021.6
Սոցիալական նպաստներ	6500.0	6500.0
Այլ ծախսեր	1600.0	773.1
Ընդամենը վարչական բյուջե	93101.4	67935.3

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր

Այդ թվում՝		
հիմնական միջոցներ	32417.5	8769.0
այլ հիմնական միջոց.իրացումից մուտքեր	0.0	-40.6
հողի իրացումից մուտքեր	-2000.0	-5569.2
ընդամենը ֆոնդային բյուջե	30417.5	3159.2

Գյուղապետարանի քարտուղար՝ / Ա. Գևորգյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, 0213, Բյուրական համայնք, 1 ին փող., շ. 68:
Հեռ.(0232)94600; http:byurakan.com.am; e mail:byurakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվարի 2016 թվականի N3

ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի դրույթներով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել համայնքի ղեկավարի վարձատրության չափը և գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը՝ ըստ հավելված 1-ի:
2. Հաստատել «Բյուրականի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը՝ ըստ հավելված 2-ի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

	կողմ-(8)	դեմ-(0)	ձեռնպահ (0)
1. ԱՅՎԱԶՅԱՆ ԳՆԵԼ			
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ			
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐԵՆ			
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ			
5. ՀՄԱՅԱԿՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ			
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌԱԴԻԿ			
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ			

/Համայնքի ղեկավար՝ /Հ. Բաբայան/

Հավելված 1
Բյուրական համայնքի ավագանու
«21» հունվարի 2016 թ. N3 որոշման 1-ին կետի

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Բյուրականի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 18
Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝ 13

	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ /
1	Համայնքի ղեկավար	1	204000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	153000

Համայնքային ծառայողներ

3	Աշխատակազմի քարտուղար ծածկագիր 1.2.1	1	163000

Կրտսեր պաշտոնների խումբ

4	Կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ / ծած. 3.1-1 /	1	108000
5	Կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ / ծած. 3.1-2 /	1	108000
6	Կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ / ծած. 3.1-3 /	1	108000
7	Կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ / ծած. 3.1-4 /	1	108000
8	Կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ / ծած. 3.1-5 /	1	108000
9	Կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ / ծած. 3.1-6 /	1	108000

Սպասարկող անձնակազմ

10	Խմելու ջրի սպասարկում	6	593000	Ինքնաֆինանսավորում
11	Էլեկտրիկ	1	73000	
12	Պահակ	1	73000+14000 հավելավճար	
13	Հավաքարար	1	74000	

Գյուղապետարանի քարտուղար / Ա. Գևորգյան /

«ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

«Բյուրականի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը՝ 17
Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝ 11

	Հաստիքի Անվանումը	Հաստիքային Միավորը	Պաշտոնային Դրույքաչափը / ՀՀ դրամ /
1	Մանկապարտեզի տնօրեն	1	120000
2	Հաշվապահ	1	78000
3	Տնտեսվար	1	74000
4	Դաստիարակ	4	91000
5	Բուժքույր	1	73000
6	Դաստիարակի օգնական	4	78000
7	Դաշնակահար	1	78000
8	Էլեկտրիկ	1	73000
9	Խոհարար	1	79000
10	Խոհարարի օգնական	1	78000
11	Պահակ	1	73000+14000հավելավճար

Գյուղապետարանի քարտուղար / Ա. Գևորգյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, 0213, Բյուրական համայնք, 1-ին փող., շ. 68:
Հեռ.(0232)94600; http:byurakan.com.am; e-mail:byurakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվարի 2016 թվականի N4

ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18, 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 10-րդ հոդվածների դրույթներով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Բյուրական համայնքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների չափը ըստ հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝

կողմ-(8) դեմ-(0) ձեռնպահ-(0)

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԳՆԵԼ _____
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ _____
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐԵՆ _____
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ _____
5. ՀՄԱՅԱԿՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ _____
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌԱԴԻԿ _____
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ _____

Համայնքի ղեկավար՝ /Հ. Բաբայան/

Հավելված
Բյուրական համայնքի ավագանու
« 21 » հունվարի 2016 թ. N4 որոշման 4-րդ կետի

ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏՈՒՐՔԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 1000 դրամ.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 150 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ 500 դրամ.

9. Բյուրական համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

ՎՃԱՐՆԵՐ

1. Գյուղապետարանի կողմից մրցություններ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանվում է՝ 20000 դրամ.

2. Գյուղապետարանի կողմից համայնքի տարածքում խմելու ջրի ենթակառուցվածքների սպասարկման ծառայություն իրականացնելու տեղական վճարը իրավաբանական և ջրավազաններ ունեցող ֆիզիկական անձանց համար սահմանվում է՝ 150 դրամ մեկ խորանարդ մետրի համար.

Գյուղապետարանի Քարտուղար /Ա. Գևորգյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, 0213, Բյուրական համայնք, 1-ին փող., շ. 68:
Հեռ.(0232)94600; http:byurakan.com.am; e-mail:byurakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունվարի 2016 թվականի N5

ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3) կետի դրույթներով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Բյուրական համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեն ըստ հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ավագանու անդամներ՝

	կողմ-(8)	դեմ-(0)	ձեռնպահ (0)
1. ԱՅՎԱԶՅԱՆ ԳՆԵԼ			
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ			
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐԵՆ			
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ			
5. ՀՄԱՅԱԿՅԱՆ ԱՐԱՅԻԿ			
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ			
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌԱԴԻԿ			
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ			

/Համայնքի ղեկավար՝ /Հ. Բաբայան/